

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/4

6 նոյեմբերի 2012թ.

Քննարկվեց «Լոռվա հաց» ՍՊԸ 19.10.2012թ. գանգատը « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2117615 ստուգման ակտի դեմ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 04.09.2012թ. թիվ 2209402 հանձնարարագրի « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Լոռվա հաց» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 19.09.2012թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209402 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

ս.թ. սեպտեմբերի 6-ին ժամը 12:26-ի սահմաններում ք.Վանաձոր, Մոսկովյան 52/2-31գ հասցեում գործող «Լոռվա հաց» ՍՊԸ-ին պատկանող հացի վաճառքի կետից մեր կողմից կատարվեց գնումներ՝ 1 հատ «Մատնաքաշ» տեսակի հաց (միջին քաշը 850 գրամ) 250 դրամով, 2 հատ «Մատնաքաշ» տեսակի հաց (միջին քաշը 560 գրամ) 7 հատը 180 դրամով, 3 հատ «Կաղապարային» տեսակի հաց (միջին քաշը 320 գրամ) 1 հատը 100 դրամով, 3 հատ «Կաղապարային» տեսակի հաց (միջին քաշը 190 գրամ) 1 հատը 50 դրամով, 1 հատ հացաբուլկեղեն կարտոֆիլով (միջին քաշը 100 գրամ) 1 հատը 100 դրամով: Գնված ապրանքների դիմաց մեր կողմից կանխիկ վճարվեց 1560 դրամ, որի դիմաց վաճառողուհի Օվսաննա Առաքելյանը տպեց և մեզ տրամադրեց ՀԴՄ կտրոն: Մեր կողմից ներկայացվեց ուսումնասիրության հանձնարարագիրը և սահմանված կարգով կատարվեց գնված ապրանքների հետ վերադարձ:

Ս.թ. սեպտեմբերի 19-ին ժամը 18:00-ի սահմաններում ք.Վանաձոր, Մոսկովյան 52/2-31գ հասցեում գործող «Լոռվա հաց» ՍՊԸ-ին պատկանող հացի վաճառքի կետից մեր կողմից կատարվեց հսկիչ գնում 2 հատ հաց 360 դրամ արժեքով: Կատարված գնման դիմաց մեր կողմից կատարվեց կանխիկ վճարում 360 դրամ, սակայն գումարը վաճառողուհու կողմից ՀԴՄ չմուտքագրվեց և մեզ կտրոն չտրամադրվեց: Մեր կողմից հանվեց «Z» հաշվետվությունը, որտեղ արտացոլված էր 0 դրամ: Այնուհետև ժամը 18:02-ին 360 դրամը մուտքագրվեց օրվա հասույթի մեծության մեջ (ՀԴՄ-ով ժամը ցույց էր տալիս 18:47) և հանվեց 360 դրամը արտացոլող «Z» հաշվետվություն: Արձանագրվել է ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

Ելնելով վերոգրյալից « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետը 25.09.2012թ-ին հրապարակել է թիվ 2117615 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 03.10.2012թ-ին կազմվել է թիվ 2117615 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ):

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով Վանաձորի ՏՀՏ պետի 04.09.2012թ-ին թիվ 2209402 հանձնարարագրի համաձայն «Լոռվա հաց» ՍՊԸ-ի ք.Վանաձոր, Մոսկովյան 52/2-31գ հասցեում գործող հացի վաճառքի կետից կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրության արդյունքները և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով «Լոռվա հաց» ՍՊԸ-ին առաջադրվում է տուգանք 150.000 դրամի չափով համաձայն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի:

«Լոռվա հաց» ՍՊԸ կողմից 19.10.2012թ-ին « ԿԱ ՊԵԿ ներկայացվել է գանգատ՝ « ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2117615 ստուգման ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Ընկերության գանգատում մասնավորապես նշված է.

Ս.թ. սեպտեմբերի 6-ին ինձ պատկանող հացաթխման արտադրամասից հարկային տեսուչների կողմից իրականացվել է հսկիչ գնում 1560 դրամի՝ գնվել է 12 հատ հաց: Հսկիչ գնման ընթացքում խախտում չի արձանագրվել:

Ս.թ. սեպտեմբերի 19-ին ժամը 18:47-ին, նույն հարկային տեսուչները խախտելով օրենսդրության պահանջները կատարել են հսկիչ գնում և կազմված արձանագրությամբ արձանագրել ՀԴՄ շահագործման կանոնների խախտում: Ինձ համար անընդունելի և անհասկանալի է արձանագրության մեջ շարադրվածը, թե ինչպես կարող է փակված դրամարկղով ժամը 18:02-ին մուտքագրվել օրվա հասույթ 360 դրամ, այն դեպքում, երբ ՀԴՄ ֆիսկալ կտրոնով ժամը ցույց էր տալիս ժամը 18:47-ը: Իրականում հենց ժամը 18:47-ին է կատարվել այդ գործողությունը: Նման շարադրանքով հարկային տեսուչները փորձել են ըողարկել աշխատանքային ժամից դուրս իրենց կողմից իրականացված գործողությունները:

Հսկիչ գնման օրն ընկերության տնօրենին չի ներկայացվել հանձնարարագրի օրինակը, որը ստորագրվել է 06.09.2012թ-ին վաճառողուի կողմից: Վերջինս պաշտոնատար անձ կամ պաշտոնատար անձի փոխարինող չի հանդիսանում, քանի որ իմ կողմից նման հրաման չի տրվել:

19.09.2012թ. թիվ 2209402 արձանագրությունը կազմվել է օրենսդրության պահանջների խախտմամբ, այսպես՝ ուսումնասիրության հանձնարարագիրը տրվել է 04.09.2012թ-ին 10 աշխատանքային օր ժամկետով, սակայն հսկիչ գնումների վերաբերյալ թիվ 2209402 արձանագրությունը կազմվել է 19.09.2012թ-ին:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել 03.10.2012թ-ի թիվ 2117615 ակտը:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով «Լոռվա հաց» ՍՊԸ գանգատում և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ճշումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀԱ ՊԵԿ վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, հարկային (տարածքային) տեսչությունների պետերին հասցեագրված «ՀԱ ՊԵԿ նախագահի 02.06.2011թ-ի թիվ 01/4-4/[134013]-11 շրջաբերական նամակի (այսուհետ՝ շրջաբերական նամակ) «Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության բովանդակության տիպային ձև»-ը բաժնում հստակ նշված են հսկիչ գնման ընթացքում իրականացվող գործողությունները և հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունում արտացոլման ենթակա տվյալները (տեղեկությունները): Մասնավորապես, «Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է, որ հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրությունում պետք է նշվի գործողությունը (հսկիչ գնումը) փաստացի կատարող անձի անուն-ազգանունը, որը ներառված է հանձնարարագրում:

Քննարկվող դեպքում 19.09.2012թ-ին կազմված հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209402 արձանագրությունում նշված չէ, թե հսկիչ գնումը փաստացի ում կողմից է կատարվել:

Շրջաբերական նամակի «Հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության բովանդակության տիպային ձև»-ը բաժնում նշված է նաև, որ գնված ապրանքները ուսումնասիրությունն անցկացնող հարկային ծառայողները պետք է ետ վերադարձնեն տնտեսավարողին, ետ ստանան հսկիչ գնման գումարը, որից հետո այսպես վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Քննարկվող դեպքում, եթե առաջին հսկիչ գնումից հետո գնված ապրանքները ետ են վերադարձվել ընկերությանը, ապա երկրորդ հսկիչ գնումից հետո, իրի արդյունքները և հիմք են հանդիսացել ստուգման ակտի կազմման համար, գնված ապրանքները ետ չեն վերադարձվել:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն, ակտում նշվում են ստուգմամբ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման

ժամկետը (եթե հնարավոր է որոշել) և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն կատարվել:

Քննարկվող դեպքում թե 19.09.2012թ-ին կազմված հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2209402 արձանագրությունում, թե ստուգման ակտում նշված չէ այն իրավական նորմը, որի պահանջները չեն կատարվել: Այսինքն, ստուգման ակտը կազմվել է <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ:

<<Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկվող դեպքում ստուգման ակտի նախագիծը կազմվել է 27.09.2012թ-ին, որը փոստային ծառայության միջոցով ուղարկվել է ընկերությանը: Համաձայն փոստային ծառայության թիվ AR 054616060 ծանուցագրի, ակտի նախագիծն ընկերությունը ստացել է 02.10.2012թ-ին: Ինչպես որ վերը նշվել է, <<Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը) 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Այսինքն, նշված ժամկետի սկիզբը պետք է հաշվարկվի առնվազն այն օրվանից, որ օրվանից, որ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը փաստացի ստացել է ակտի նախագիծը:

Քննարկվող դեպքում ստուգման ակտը կազմվել է ընկերության կողմից ակտի նախագիծը ստանալու հաջորդ օրը՝ 03.10.2012թ-ին, այսինքն՝ խախտվել է <<Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին) ակտի նախագիծը ուսումնասիրելու և առարկություններ ներկայացնելու համար օրենսդրությամբ սահմանված ժամկետը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝


ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ձ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ կենտրոնական ընտրական ժողովի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2117615 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահի



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ